յերեկոյն սկսանիմք զխորհուրդն հուր վառելով և ջահ լուցանելով, նախ զի յերեկոյն եկն Տէրն ի տաճարն յորում ինքնին բացաւ արևելեան դուռն տաճարին, յորում Եզեկիէլ, որ զշինութիւն տաճարին գրեաց՝ ասաց հրամանաւն Աստուծոյ. «Եթէ դուռն արևելեան փակեալ կացցէ, և ոչ ոք մտցէ և ելցէ ընդ նա, բայց Աստուածն Իսրայէլի...»։ Իսկ թէ վասն ի՞նչ հուր վառելիք, զի ի մերձենալ Տեառն ի Տաճարն, ինքնին բացաւ դուռն, և ճայթմունք ահագին եղև և դղրդեցաւ քաղաքն յօրինակ տիեզերաց, եւ ամենեքեան վառեալ լուսով եկին ի Տաճարն ընդառաջ Տեառն եւ ասեն՝ Տէր էանց ընդ այս դուռն, ուստի և անուանեցաւ աւուրս տօնն Տեառնընդառաջ եւ Տէր ընդ այս, զոր ծեքելով ասեմք Տէրընդիս, վասն այն եւ մեք զնոյն օրինակ ձեւացուցանեմք հուր վառեալ եւ ջահ լուցեալ նախատօնակ գալստեան տեառն» (Տաք. Զ. էջ 78–79)։ Նոյն վարդապետը կը շարունակէ իր նոյն քարոզին մէջ ըսելով. «Մի՛ կարծեսցէ ոք թէ աղտեղութիւն ինչ կայր ի ծնունդն Նորա, վասն այն յըստակ մոմ վառեալ առնումք ի ձեռս. այլ թէ որպէս լոյսս այս սուրբ է և գեղեցիկ, նոյնպէս և դու սուրբ ես, իբրև զլոյս, և սրբութեան պէտք ոչ ունես։ Ի յայս միտս հաստատելիք զմոմն՝ յորժամ ասէ Աւետարանն «ընդ քո անձնդ անցցէ սուր». և տամք օրհնութեան մոմ ժողովրդեանն եւ օգտակար է կայծի կայծակոյ եւ բազում այլ ինչ ցասման։ Ունիմք զմոմ ի ձեռս յօրինակ Քրիստոսի, որպէս յայնժամ կոյսն սուրբ, և Յովսէփ եւ Աննա եւ ծերն ունէին ի ձեռս զՔրիստոս քարձեալ» (անդ. էջ 87)։

3. Սիմեոն Ծերունիին տունը. — ԺԲ. դարուն ա-